ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

2019թ. հուլիսի 30-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 34 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնյոթ, աշխատանքի տեղավորման՝ տասնհինգ, վարկերի մարման ժամկետը երկարաձգելուն աջակցելու եւ հողամասի սեփականաշնորհման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասնմեկին տրվել է դրական լուծում, չորս դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում, երկու դիմում մերժվել է:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման, եւ քննվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են մյուս դիմումները: